ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

(Ծննդյան 80-ամյակի առթիվ)

Վ. Ա. ԴԻՎՈՅԱՆ

Լրացավ հայ բազմավաստակ պատմաբան, պետական և կուսակցական խոշոր գործիչ, ակադեմիկոս Աշոտ Գարեգինի Հովհաննիսյանի ծննդյան 80-ամյակը։



Աշոտ Հովհաննիսյանի կյանքի ուղին համընկավ մի ժամանակաշրջանի, որը բախտորոշ նշանակություն էր ունենալու հայ ժողովրդի հետագա պատմական զարգացման համար, բերելու էր սոցիալական և ազգային-քաղաքական ազատագրություն, նախանշելու նրա տեղն ու դերը մարդկային հասարակության առաջընթացի համար մղվող մահու և կենաց պայքարի մեջ։ Աշոտ Հովհաննիսյանը պատկանում է XX դարասկզբի այն հայ մտավորական սերնդին, որը բոլորանվեր լծվեց իր ժողովրդի ազատագրության մեծ գործին։

Այդ սերնդի շատ ներկայացուցիչների բնորոշ առանձնահատկություններից էր այն, որ նրանք հանդես էին գալիս ոչ միայն որպես պրակտիկ գործիչներ, այլ նաև որպես գրչի մարտիկներ։ Հեղափոխական պաթոսով շնչող նրանց գրվածքները խոր հետքեր էին ակոսում մեր հասարակական կյանքում, առավել ցայտուն դարձնում մարքսիստական իդեալների վեհությունը։

Լինելով առաջին պրոֆեսիոնալ մարքսիստ պատմաբանը ժամանակի հայ իրականության մեջ, Աշոտ Հովհաննիսյանը մեծ ծառայություններ մատուցեց ոչ միայն հեղափոխական ընթացիկ գոտեմարտերին, այլև դարձավ հայ մարքսիստական պատմագրության հիմնադիրներից մեկը։ Բարձր կրթությունը, լեզուների լավ իմացությունը, գիտական անխոնջ պրպտումները նրան հնարավորություն ընձեռեցին կերտելու աշխատություններ, որոնք հեղինակի անունը դրոշմեցին հայ պատմագիտության մեծագույն դեմքերի փայլուն համաստեղության մեջ։

* * *

Աշոտ Հովհաննիսյանը ծնվել է 1887 թ. հունիսի 17-ին, Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքում։ Շուշին հայ իրականության մեջ այն վայրերից մեկն էր, որը նշանակալից հետքեր է թողել մեր ժողովրդի պատմության մեջ։ XIX դարի վերջին և XX դարի սկզբին Շուշին դարձավ գաղափարական իրարամերժ բախումների ասպարեզ, ծնունդ տվեց գործիչների, որոնք տարբեր ուղիների վրա էին փնտրելու իրենց ժողովրդի ազատագրության գործը։

Ռուսական առաջին հեղափոխության ժամանակ պատանի Աշոտ Հովհաննիսյանը Շուշիի ռեալական ուսումնարանի աշակերտ էր։ Նրա վրա հատկապես մեծ ազդեցություն գործեցին սոցիալ-դեմոկրատական գաղափարները, որոնց շնորհիվ Աշոտ Հովհաննիսյանը կանգնում է սոցիալ-դեմոկրատական դիրքերում, իսկ 1906 թ. դառնում Ռուսական սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության անդամ, անվերապահորեն որդեգրվելով բոլշևիկյան ուղղությանը։

Ավարտելով Շուշիի ռեալական դպրոցը, Աշոտ Հովհաննիսյանը 1906 թ. մեկնում է Գերմանիա, որտեղ ընդգրկվում է արտասահմանյան ռուս սոցիալ-դեմոկրատական կազմակերպության շարքերում։ Գերմանիայում՝ Ենայի և Մյունխենի համալսարաններում ուսումնառության տարիներին նա հիմնովին ուսումնասիրում է փիլիսոփայություն, պատմություն, տնտեսական գիտություններ։

Համակված հայ ժողովրդի ազատագրության գաղափարներով, Հովհաննիսյանը սկսում է ուսումնասիրել նրա ազատագրական պայքարի պատմությունը։ Այդ պրպտումների ու մտորումների արդյունքն է հանդիսանում «Իսրայել Օրին և հայերի ազատագրության գաղափարը» աշխատությունը, որի համար նրան շնորհվեց փիլիսոփայության դոկտորի աստիճան և որը հրատարակվեց գերմաներեն Մյունխենում՝ 1913 թ.։

Հայրենիք վերադառնալուց հետո Աշոտ Հովհաննիսյանը սկսում է դասավանդել Շուշիի հոգևոր սեմինարիայում, իսկ մեկ տարի անց, 1914 թ., աշխատանքի է անցնում Էջմիածնի Գևորգյան ճեմարանում։ Այստեղ նա ավանդում է ընդհանուր պատմություն, քաղաքատնտեսություն, լատիներեն և գերմաներեն։ Այս առարկաների սոսկ թվարկումն իսկ ցույց է տալիս Աշոտ Հովհաննիսյանի լայն պատրաստությունը, համակողմանի հետաքրքրությունները։ Դասախոսական աշխատանքին զուգընթաց նա հետազոտություններ է կատարում Էջմիածնի մատենադարանում, գրում է մի շարք աշխատություններ, որոնք տպագրվում են «Արարատ» ամսագրում և առանձին բրոշյուրներով։ Այդ աշխատություններում նա շարունակում էր իր պրպտումները հայ ազատագրական մտքի ուսումնասիրության ուղղությամբ, նոր փաստեր երևան հանում, տալիս նոր մեկնաբանություններ։

Սակայն Աշոտ Հովհաննիսյանը նաև հեղափոխական էր և չէր մոռանում իր պարտքը հարազատ ժողովրդի նկատմամբ։ Նա ճեմարանի ուսանող երիտասարդության շրջանում ընդհատակյա հեղափոխական աշխատանք է տանում, նրանց հաղորդակից դարձնում իր յուրացրած մարքսիստական աշխարհայացքին, նախապատրաստում հեղափոխական պայքարի ապագա գոտեմարտերին։ Նրա անմիջական ազդեցության տակ ճեմարանի ուսանողներից Ա. Ի. Միկոյանը, Ա. Խանջյանը, Ա. Շահգելդյանը և ուրիշներ յուրացրին մարքսիզմ-լենի-

նիզմը և ընդգրկվեցին կուսակցական-հեղափոխական գործունեության մեջ։

1917 թ. ռուսական հսկա կայսրության տերիտորիայում բռնկվում է հեղափոխության հրդեհը։ Հեղափոխական պայքարի բուռն օրերին Աշոտ Հովհաննիսյանը Բաքվում է, ուր ղեկավարում է Բաքվի սովետի կուլտուր-լուսավորական բաժինը, իսկ 1918 թ. հուլիսից՝ Բաքվի կոմունայի լուսավորության կոմիսարիատի դպրոցական բաժինը։ Բաքվի կոմունայի անկումից հետո նրան հաջողվում է անցնել Մոսկվա։ Այստեղ 1918 թ. աշնանից մինչև 1920 թ. մարտ ամիսը վարում է Հայկական գործերի կոմիսարիատի պատմագրական բաժինը, իսկ ՌՍՖՍՀ լուսավորության ժողկոմատում՝ հայկական բաժինը։ Միաժամանակ նա, որպես պրոֆեսոր, հայ ժողովրդի պատմություն է ավանդում Լաղարյան ճեմարանում։

1920 թ. մայիս ամսին Աշոտ Հովհաննիսյանը ՌՍՖՍՀ դիվանագիտական միսիայի կազմում գործուղվում է Հայաստան։ Ծանր կացություն և քաղաքական խոր ճգնաժամ ապրող իր ժողովրդի փրկության միակ ելքը տեսնելով սովետական կարգերի հաստատման և Սովետական Ռուսաստանի հետ դաշինք կնքելու մեջ, նա անդուլ աշխատանք է տանում այդ ուղղությամբ։

Հայաստանում սովետական կարգերի հաղթանակից հետո մենք Աշոտ Հովհաննիսյանին տեսնում ենք լուսավորության ժողովրդական կոմիսարի պաշտոնում, իսկ 1922 թ. նա ընտրվում է Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղար և մինչև 1927 թ. մնում է այդ պաշտոնում։ Ալ. Մյասնիկյանի, Ս. Լուկաշինի, Ս. Կասյանի, Ա. Մռավյանի հետ համատեղ նա մեծ անձնազոհությամբ ու եռանդով ղեկավարում է պատերազմի արհավիրքներից քարուքանդ եղած Հայրենի երկրի վերականգնման գործը, դնում նոր կյանքի հիմնաքարերը։ Միաժամանակ որպես Երևանի պետական նորաստեղծ համալսարանի պրոֆեսոր, նա 1921--1926 թթ. ավանդում է հայ ժողովրդի պատմություն և լենինիզմ, բազմաթիվ հոդվածներով հանդես է գալիս հանրապետական մամուլում, անհաշտ պայքար մղելով գաղափարական թշնամիների դեմ։

1928 թ. Աշոտ Հովհաննիսյանը մեկնում է Մոսկվա, ուր երկու տարի Մարքսի-Էնգելսի ինստիտուտում ղեկավարում է միջազգային հարաբերությունների պատմության կաբինետի աշխատանքները։ 1929—1934 թթ. նա ՍՍՀՄ ազգությունների ինստիտուտում արևելքի ժողովուրդների ազգային-հեղափոխական շարժումների պատմության առարկայի գծով պրոֆեսոր էր, իսկ 1934—1936 թթ. եղել է նյութական կուլտուրայի պատմության պետական ակադեմիայի իսկական անդամ և նրա Մոսկվայի բաժանմունքի դիրեկտոր։ 1936—37 թթ. Աշոտ Հովհաննիսյանը հանդիսացել է ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի դիրեկտորի տեղակալ։ Դրանից հետո առժամանակ ընդհատվեց կուսակցական, պետական և գիտական գործչի բազմաբեղուն գործունեությունը։

1954 թ. Աշոտ Հովհաննիսյանը աշխատանքի է անցնում Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում՝ որպես ավագ գիտաշխատող, իսկ 1961 թվականից ղեկավարում է նույն ինստիտուտի նոր պատմության բաժնի աշխատանքները։ Նա այժմ հանդիսանում է նաև «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատոր երկի հեղինակներից մեկը և գլխավոր խմբագիրը։ 1960 թ. Աշոտ Հովհաննիսյանը ընտրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս։

Իր բազմամյա գիտական գործունեության ընթացքում Աշոտ Հովհաննիսյանը զբաղվել է նաև մանկավարժական աշխատանքով։ Մեծ են նրա ծառայությունները հատկապես գիտական երիտասարդ կադրերի դաստիարակության գործում։ Միայն վերջին տարիներին նրա մի շարք ասպիրանտներ պաշտպանել են թեկնածուական դիսերտացիաներ, հրատարակել ուսումնասիրություններ ու մենագրություններ՝ նպաստելով սովետահայ պատմագիտության հետագա զարգացմանը։ Նրա բազմաթիվ աշակերտներ գիտական, հասարակական և մանկավարժական աշխատանք են տանում Սովետական Միության տարբեր վայրերում։ Հասարակական-քաղաքական և գիտական բեղմնավոր գործունեության համար և ծննդյան 80-ամյակի կապակցությամբ Աշոտ Հովհաննիսյանը պարգևատրվեց Լենինի շքանշանով։

* * *

Եթե Աշոտ Հովհաննիսյան-հասարակական և քաղաքական գործչի կյանքը ամբողջովին նվիրաբերվել է հարազատ ժողովրդի սոցիալական և ազգային-քաղաքական ազատագրության վեհ գործին, ապա Աշոտ Հովհաննիսյան-գիտնականի նախասիրությունների կիզակետը հանդիսացել է հայ ժողովրդի դարավոր ազատագրական պայքարի պատմությունը՝ սկսած վաղ միջնադարից։ Սովետահայ պատմաբանների մեջ առաջինը Աշոտ Հովհաննիսյանն էր, որ ձեռնարկեց այդ հարցերի համակողմանի ուսումնասիրությունը։

Դեռևս Մյունխենում հրատարակված իր «Israel Ory und die armensiche Beireiundsidee» դիսերտացիոն աշխատության մեջ նա պատմաբաններից պահանջում էր քննադատական վերաբերմունք ցուցաբերել դեպի փաստերը, դրանք դիտել իրենց զարգացման մեջ, պատմականորեն ընկալել անցյալը, որը և հնարավորություն կտա դասեր առնել ապագայի համար։ Մարքսիստ պատմաբանը այս թեզերով է առաջնորդվել ոչ միայն հիշյալ գործը շարադրելիս, այլև իր ողջ գիտական գործունեության ընթացքում։

Յուրահատուկ է եղել Հայաստանի պատմական ճակատագիրը։ Դարեր առաջ դառնալով աշխարհակալ հակառակորդների կատաղի գոտեմարտերի ասպարեզ, կարևոր դիրք գրավելով Առաջավոր Ասիայի մատույցներում, Հայաստանը դարձել էր կովախնձոր և բազմաթիվ մահացու հարվածներ կրել։ Նրա համեմատական ինքնուրույնությանը և երբեմնի անկախությանը վերջ դրեցին արևելքից եկած վաչկատուն ցեղերի արշավանքները, որոնց հետևանքով երկար ժամանակ երկիրն ընկղմվեց օտարերկրյա տիրակալության մթնախավար օվկիանոսը։ Պատմական հանգամանքների դժբախտ դասավորումը, հարկադրյալ գաղթականությունը, օտար տարրերի Հայաստանում բնակություն հաստատելը անասելի դժվարացրին հայ ժողովրդի ազատագրական պայքարը։ Նրա այդօրինակ բաղձանքները ընդունեցին կրոնական գունավորում, ծնունդ տվին զանազան տեսիլների ու լեգենդների։ Վերջիններս, սոցիալական ամեն մի միջավայրում առանձնահատուկ գունավորում ընդունելով հանդերձ, մի հարցում միասնական էին՝ ազատագրության կարելի է հասնել միայն արտաքին օգնության շնորհիվ, որը կարող են բերել հեռավոր, բայց հզոր քրիստոնյա տերությունները։

Հայ ազատագրական մտքի այդ յուրատեսակ դրսևորման քննությանն էլ նվիրեց Աշոտ Հովհաննիսյանն իր «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատ-

մության» երկհատոր ստվարածավալ երկը, որտեղ հանգամանալից քննության առավ հայ ազատագրական մտքի էվոլյուցիան՝ սկսած վաղ միջնադարից։ Զբաղվելով միայն ազատագրական տեսիլների ու լեգենդների ժամանակագրական քննությամբ, պատմաբանը ցույց տվեց սոցիալական այն միջավայրը, ուր յուրաքանչյուր ժամանակահատվածում ուրույն գունավորում էին ստացել այդ տեսիլները։

Ձեռագրական հուշարձանների, գոյություն ունեցող հարուստ գրականության ընձեռած փաստերի խոր ուսումնասիրության հիման վրա նա հիշյալ աշխատության մեջ պատասխան է տալիս նաև բազմապիսի ուրիշ հարցերի, առատ լույս սփռելով միջնադարյան Հայաստանի և հարևան երկրների պատմության ամենատարբեր կողմերի վրա։

Վերլուծելով պատմության պահպանած և ընձեռած փաստերը, բազմավաստակ պատմաբանը ցույց է տալիս այն զարտուղի կածանները, որով ընթացել է մեզանում ազատագրական միտքը, քննարկում է հայ ժողովրդի ունեցած պատրանքները, մինչև որ նա, Իսրայել Օրու Արևմուտքում կատարած երկարատև ու ապարդյուն թափառումներից հետո, պետք է իր հայացքը հառեր Ռուսաստանին և, այդպիսով, նոր ոգի ու մարմին հաղորդեր ազատագրական վաղեմի լեգենդին։

«Դրվագներում» հայ ժողովրդի ազատագրական նկրտումները ցույց են տրված սոցիալ-տնտեսական հարաբերությունների և քաղաքական ուղղությունների պայքարի լայն հետնախորքի վրա։ XVIII դ. սկզբին Հայաստանում ծավալված ազատագրական շարժումը հեղինակը դիտում է սերտորեն կապված Անդրկովկասի ժողովուրդների մղած պայքարի հետ, նշելով, որ ազատագրական շարժման գլխավոր շարժիչ ուժը ժողովրդական լայն զանգվածներն էին։ Հատուկ կարևորություն ունեն Աշոտ Հովհաննիսյանի դրույթները հայերի ռուսական կողմնորոշման, ազատագրական շարժման ազգային ու դասակարգային բովանդակության և քաղաքական ուղղվածության վերաբերյալ։

Պատմական նախընթաց ամբողջ զարգացման փաստերի հետազոտության հիման վրա Աշոտ Հովհաննիսյանը «Դրվագներում» ցույց է տալիս, որ եթե սկզբնապես ռուսական կողմնորոշումը կրում էր էպիզոդիկ բնույթ և արտահայտում էր լոկ հայ ղեկավար դասակարգի առանձին ներկայացուցիչների տրամադրությունները, ապա հետագայում, XVIII դարի 20-ական թթ., երբ Արևելյան Հայաստանում պայքար էր մղվում պարսկական և թուրքական բռնապետական լծից ազատագրվելու համար, երբ օգնության և փրկության ողջ հույսը կապվում էր բացառապես Կասպիականի արևմտյան եզերքին գտնվող ռուսական բանակի հետ, ռուսական կողմնորոշումը ստացավ համազգային երանգավորում, որով և պայմանավորված էր նրա հաղթանակը։

Նույն հարցերը քննության են առնված նաև Աշոտ Հովհաննիսյանի խմբագրությամբ լույս տեսած «Հայ-ռուսական հարաբերությունները XVIII դարի առաջին երեսնամյակում» վավերագրերի երկհատոր ռուսերեն ժողովածուի նեբածության մեջ, որտեղ նա ավելի է զարգացնում և խորացնում իր տեսակետները։

* * *

Աշոտ Հովհաննիսյանի ստեղծագործական կյանքի բազմաթիվ տարիներ նվիրվել են XIX դարի հայ հեղափոխական շարժումների ռահվիրա Միքայել

Նալբանդյանի կյանքի և գործի ուսումնասիրությանը։ Դեռևս 30-ական թթ., Մոսկվայի և Լենինգրադի արխիվներում պրպտումներ կատարելիս, նա գտավ Միքայել Նալբանդյանի մի շարք անտիպ երկասիրությունները, որոնք նոր լույս էին սփռելու հայ մեծ գործչի ողջ գործունեության վրա։ Հրապարակ հանելով Մ. Նալբանդյանի «Անտիպ երկերը» բովանդակալից առաջաբանով և ընդարձակ ծանոթագրություններով, Աշոտ Հովհաննիսյանը համոզիչ կերպով ցույց տվեց, որ ինչպես իր գործունեությամբ, այնպես էլ աշխարհայացքով Նալբանդյանը հեղափոխական-դեմոկրատ էր։ Դրանով իսկ ցրվում էր Նալբանդյանի անձի շուրջը հյուսված այն առասպելը, ըստ որի նա և նրա կողմնակիցները հայրենի իրականությունից կտրված, ռուս «նիհիլիստների» հայացքները պրոպագանդող անձնավորություններ էին։ Աշոտ Հովհաննիսյանը այստեղ առաջին անգամ ցույց տվեց հայ հեղափոխական շարժման կապը ռուս «վաթսունականների» Գերցենի, Բակունինի, Օգարյովի, Չերնիշևսկու հետ, քննարկեց Նալբանդյանի հեղափոխական ստրատեգիան և տակտիկան՝ սերտորեն առնչված Գերցենի և Օգարյովի գաղափարներին։

Շարունակելով իր անձանձիր ու բեղմնավոր հետազոտությունները Միքայել Նալբանդյանի կյանքի և գործունեության, նրան ծնունդ տված, սնած և աճեցրած միջավայրի ամբողջական վերլուծության ուղղությամբ, Աշոտ Հովհաննիսյանը 1955—1956 թթ. երկու ծավալուն հատորներով լույս ընծայեց Մ. Նալբանդյանին նվիրված մի նոր կապիտալ գործ՝ «Նալբանդյանը և նրա ժամանակը» վերտառությամբ։

Փիլիսոփայական ու բանասիրական փայլուն պատրաստությունը, եվրոպական և ռուսական հասարակական-քաղաքական ու հեղափոխական շարժումների խոր իմացությունը հնարավորություն ընձեռեցին Աշոտ Հովհաննիսյանին նշված աշխատության մեջ լուծելու մի շարք կարևոր ու բարդ հարցեր։ «Նալբանդյանը և նրա ժամանակը» աշխատությունը հնարավորություն է տալիս բազմակողմանի ու հստակ պատկերացում կազմելու ինչպես Միքայել Նալբանդյանի կյանքի ու գործունեության, նրա հայացքների աստիճանական զարգացման, այնպես էլ նրա միջավայրի և ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական այլևայլ երևույթների ու իրադարձությունների մասին։ Հեղինակը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ 1859—61 թթ. Ռուսաստանում գոյություն ունեցող հեղափոխական ճգնաժամի հետ մեկտեղ բեկում է տեղի ունենում Մ. Նալբանդյանի ազգային-լուսավորական գործունեության մեջ։ Այդ տարիներից էլ արդեն նա սկսում է պայքարել հանուն հայկական դեմոկրատիայի ազատագրական ձգտումների միավորման ռուսական գյուղացիական հեղափոխության և Արևմուտքի ազգային-ազատագրական ծավալվող շարժումների հետ։ Այստեղից էլ այն խոշոր նշանակությունը, որ ստանում է Մ. Նալբանդյանը հայ ժողովրդի պատմության մեջ, որպես մի գործիչ, որը ազգային համեմատաբար նեղ շրջանակներից դուրս է գալիս դեպի համամարդկային գործունեության ասպարեզ։

«Նալբանդյանը և նրա ժամանակը» համակողմանի ուսումնասիրության մեջ ներկայացված են անցյալ դարի 50—60-ական թթ. հայկական իրականության մեջ գոյություն ունեցող հասարակական-քաղաքական հոսանքները (կղերա-ազգայական, լիբերալ-բուրժուական, ազգային-պահպանողական և հեղափոխական-դեմոկրատական) իրենց ուրույն գործելակերպով և նպատակադրումներով։ Այն միևնույն ժամանակ հնարավորություն է տալիս բացահայ-

տելու 70—80-ական թթ. հասարակական-քաղաքական հոսանքները, նարոդնիկական շարժման առաջացումը հայ իրականության մեջ և նրա հետագա վերաճումը ազգային-քաղաքական կուսակցությունների, որոնց դեմ պայքարի պիտի ելներ հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան։

* * *

Հեղափոխական բուռն պայքարի և երկրի սոցիալիստական վերակառուցման տարիներին մշտապես գտնվելով պայքարի առաջավոր դիրքերում, Աշոտ Հովհաննիսյանը ոչ միայն ի պաշտոնե, այլև գրիչը ձեռքին արձագանքել է կյանքի առաջադրած կենսական և առաջնահերթ հարցերին։ Նա բազմաթիվ հոդվածներ ունի՝ ուղղված մեր գաղափարական հակառակորդների դեմ, որտեղ մերկացնում է նրանց և ցույց տալիս այն իդեալը, հանուն որի պետք է պայքարել։ Այդ հոդվածներից շատերը ժամանակի հրատապ հարցերի պատմական խոր վերլուծություններ են, որոնք իրենց արժանի տեղն են ունենալու մեր պատմագրության մեջ։

Աշոտ Հովհաննիսյանը առաջինն էր սովետահայ պատմաբաններից, որ քննության ենթարկեց Մայիսյան ապստամբությունը՝ «Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը» աշխատության մեջ, ցույց տալով ապստամբության պատճառները և վերլուծելով այն իրադարձությունները, որոնք ի վերջո պետք է հանգեցնեին Հոկտեմբերի գաղափարների հաղթանակին Հայաստանում։

Հայաստանում սովետական կարգերի հաղթանակի, մեր գաղափարական հակառակորդների դեմ պայքարի հարցերին են նվիրված Աշոտ Հովհաննիսյանի «Մեր հեռանկարները և լենինիզմը», «Համազգային կրիզիսը», «Դաշնակցության իդեոլոգիայի ընթացիկ կուրսը», «Գաղութահայ խնդիրներ», «Դաշնակցության առթիվ», «Դաշնակցությունը և պատերազմը» և բազմաթիվ այլ հոդվածներ ու բրոշյուրներ, որոնք գրված են բոլշևիկյան կրքոտությամբ և հարուստ են լայնախոհ պատմաբանին հատուկ ընդհանրացումներով։

Աշոտ Հովհաննիսյանի գրչին են պատկանում նաև թարգմանական մի շարք գործեր՝ Կ. Մարքսի «Հեղափոխությունը և հակահեղափոխությունը Գերմանիայում» (Մոսկվա, 1920 թ.), ՐԿԿ(բ) ծրագիրը, ընդունված կուսակցության VIII համագումարում, Կ. Մարքսի «Ր՞նչ պիտի դուրս գա եվրոպական Թուրքիայից» (Բաքու, 1917 թ.) և այլն։

Ամսագրային հոդվածի շրջանակներում դժվար է ընդգրկել Աշոտ Հովհաննիսյանի պատմագիտական ժառանգության մեջ շոշափված բոլոր հարցերը։ Վերոհիշյալ կարևոր աշխատություններից բացի նրա գրչին են պատկանում 70-ից ավելի ուրիշ գիտական հետազոտություններ՝ նվիրված հայ ժողովրդի պատմության տարբեր հարցերին։ Դրանցից են «Ֆրիկը պատմաքննական լույսի տակ», «Զաքարիա Ագուլեցու գործերը և օրերը» (ռուսերեն), «Թոնդրակեցիների շարժումը Հայաստանում» (ռուսերեն), «Ազգության հարցերը Սալբանդյանի հրապարակախոսության մեջ» (ռուսերեն), «Գեղամա և Սևրա մելիքների տոհմը» և այլն։

Անձնվեր քաղաքացու և խոշոր գիտնականի անուրանալի ծառայությունները հարազատ ժողովրդին և հայրենի գիտությանը ըստ արժանվույն են գնահատվում այժմ և կգնահատվեն ապագա սերունդների կողմից։

АКАДЕМИК АШОТ ИОАННИСЯН

(К 80-летию со дня рождения)

В. А. ДИЛОЯН

(Резюме)

Исполнилось 80 лет со дня рождения крупного ученого-историка, общественного и политического деятеля, одного из основоположников марксистской историографии в армянской действительности академика АН Армянской ССР Ашота Гарегиновича Иоаннисяна.

А. Г. Иоаннисян родился 17 июля 1887 г. в г. Шуши. После окончания местного реального училища в 1906 г. он поехал в Германию для получения высшего образования. Здесь он учился в Иенском и Мюнхенском университетах. В 1913 г. в Мюнхене вышла в свет его докторская диссертация «Израель Ори и идея национального освобождения армян» (на немецком языке), ознаменовавшая вступление Ашота Гарегиновича на поприще арменоведения. По возвращении из Германии А. Г. Иоаннисян преподавал в Шушинской семинарии, затем в Эчмиадзинской духовной семинарии. Будучи членом РСДРП еще с 1906 г., он одновременно вел подпольную работу среди учащейся молодежи, из которой многие впоследствии стали видными деятелями нашей партии, нашего государства. После революции 1917 г. А. Г. Иоаннисян принимал активное участие в утверждении Советской власти в Баку, Москве и Армении. С 1922 по 1927 г. он — генеральный секретарь ЦК КП Армении. С 1928 по 1937 г. А. Г. Иоаннисян вел плодотворную научную и педагогическую работу в Москве, являлся членом ГАИМКАа и директором ее московского отделения, заместителем директора Института истории АН СССР. С 1954 г. он работает в Институте истории АН Армянской ССР, где ныне возглавляет Сектор новой истории Армении, одновременно являясь главным редактором и одним из авторов многотомной «Истории армянского народа».

За выдающиеся заслуги в развитии советской исторической науки в 1960 г. А. Г. Иоаннисян был избран академиком АН Армянской ССР, а в связи с 80-летием со дня рождения и за плодотворную научную и общественную деятельность Президиум Верховного Совета СССР недавно наградил его орденом Ленина.

Перу Ашота Гарегиновича принадлежат многочисленные труды по различным проблемам истории армянского народа, начиная с раннего средневековья до наших дней. Такие капитальные труды, как «Очерки истории армянской освободительной мысли», «Налбандян и его время», «Неизданные труды М. Налбандяна» и др., навсегда останутся в золотом фонде арменоведения. В упомянутых трудах и других произведениях А. Г. Иоаннисяна подробно исследованы вопросы многовековой освободительной борьбы армянского народа за свержение чужеземного ига и избавление от оков социального гнета.

Жизнь и непрестанная научная деятельность академика Ашота Гарегиновича Иоаннисяна, гражданина и ученого,— вдохновляющий пример служения народу.